ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄՐԳԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ ОБЛОСТЬ
МУНИЦИПАЛИТЕТ
С. МРГАСТАН

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

Հ.Հ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

N---105

«03» հուլիսի 2019թ.

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ձեզ է ներկայացվում՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ղեկավարի 2019թվականի հունիս ամսվա ընթացքում արձակած կարգադրությունները և ընդունած որոշումները:

Առդիր՝ 4 թերթ

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«07» հունիսի 2019թվական թիվ 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.2019թվականի հուլիսի 9-ին ժամը 12:00-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի համայնքապետարանի շենքում անցկացնել Մրգաստան համայնքի աշխատակազմի համայնքային ծառայողի թափուր պաշտոն /1-ին կարգի մասնագետի 3.2-1/ զբաղեցնելու համար մրցույթ:
2.Աշխատակազմի քարտուղար Ս. Ղարիբյանին՝ կազմակերպել մրցույթի անցկացման անհրաժեշտ միջոցառումները:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ ընդունման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2019թվական հունիսի 7
Մրգաստան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«21» հունիսի 2019թվական թիվ 5-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Բյուջետային համակարգի մասին» օրենքի հոդված 29-ի հինգերորդ մասով և 33-րդ հոդվածի երրորդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ավագանու 2018թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 2 նիստի, «2019թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 46-Ն որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի 2019թվականի բյուջեի ժամանակացույցում կատարել հետևյալ վերաբաշխումը

2.Վարչական մասի

10բաժին 07 խումբ 01 դաս սոցիալական պաշտպանություն ծրագրով 4729հոդվածով չորրորդ եռամսյակում նախատեսված 2000.0 հազար դրամից 500.0 հազար դրամը տեղափոխել երկրորդ եռամսյակ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2019թվական հունիսի 21
Մրգաստան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«06» հունիսի 2019թվական թիվ 16

Համաձայն <<ՀՀ Արմավիրի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2019թ. հիմնական միջոցառումների պլան»-ի 8.2.2 կետի պահանջների, իմ ղեկավարությամբ, Մրգաստան համայնքում 21.06.2019թ. անցկացվելու է շտաբային ուսումնավարժություն <<ՈՒժեղ երկրաշարժի առաջացման դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը>> թեմայով:

Նշված ուսումնավարժությանը ժամանակին նախապատրաստվելու և արդյունավետ անցկացնելու նպատակով

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. ՈՒսումնավարժության ղեկավարի տեղակալ նշանակել համայնքապետի տեղակալ՝ Գևորգ Հակոբյանին:
2. ՈՒսումնավարժությունում ներգրավվել՝
- համայնքի ղեկավար կազմին,
- համայնքի ԱԻ հանձնաժողովին,
- համայնքի տարահանման հանձնաժողովին,
- համայնքի կազմավորումների հրամանատարներին.
3. ՈՒսումնավարժության ղեկավարի տեղակալին.
- Համագործակցել Արմավիրի մարզային փրկարարական վարչության հետ ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաստաթղթերի կազմման հարցերում:
- Մինչև 06.06.2019թ. մշակել և իմ հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը:
- Ապահովել անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և մինչև 17.06.2019թ. ներկայացնել հաստատման:

- Կազմակերպել ուսումնավարժությանը ներգրավված ուժերի նախապատրաստումը համաձայն հաստատված օրացուցային պլանի:
- Ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել մինչև 18.06.2019թ.:

4. Սույն կարգադրությունը հայտարարել ըստ առնչության:
5. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2019թվական հունիսի 6
Մրգաստան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«13» հունիսի 2019թվական թիվ 17

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Աշխատանքային օրենսգրքի» հոդված 101-ի առաջին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ղեկավարի տեղակալի զեկուցագիրը համայնքի առաջին փողոցում խցանված կոյուղագծի մաքրման աշխատանքները կազմակերպելու մասին և հիմք ընդունելով Ռաֆիկ Գարեգինի Ներսեսյանի դիմումը՝ իրեն համայնքում ընթացող կոյուղագծերի մաքրման աշխատանքներում ներգրավելու մասին.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Ռաֆիկ Գարեգինի Ներսեսյանին ներգրավել համայնքում ընթացող կոյուղագծերի մաքրման աշխատանքներում նրա հետ կնքել «Ժամանակավոր աշխատանքային պայմանագիր» 13-ը հունիսի 2019թվականից 7 օր ժամկետով:
2.Պայմանագրի գին սահմանել 55 000 /հիսունհինգ հազար/ դրամը:
3.Աշխատանքներն ավարտել մինչև 20-ը հունիսի 2019թվականը:
4.Հաշվապահին՝ կատարել վճարում օրենքով սահմանված կարգով պայմանագրի ավարտին:
5.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից և գործում է մինչև 20-ը հունիսի 2019թվականը:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2019թվական հունիսի 13
Մրգաստան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«17» հունիսի 2019 թվական թիվ 18-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 23 հոկտեմբերի 2000թվականի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 656 որոշումով և հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 29 մայիսի 2018թվականի, թիվ 01/11/1919-18 գրությունը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Կազմել՝Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի հողային հաշվեկշիռը 2019թվականի հուլիսի 1-ի դրությամբ և ներկայացնել՝Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի միավորված մարզերի ստորաբաժանում համաձայնեցման:
2.Համաձայնեցված հողային հաշվեկշիռը ներկայացնել համայնքի ավագանու հաստատմանը:
3.Հաստատված հողային հաշվեկշիռը ներկայացնել մարզպետարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:
4.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2019թվական հունիսի 17
Մրգաստան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«28» հունիսի 2019թվական թիվ 19

ՊԱՏՃԵՆԱՀԱՆՈՂ ՍԱՐՔ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 38-ի առաջին մասի 8-րդ կետով, և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի հունիսի 20-ի, թիվ 33 որոշումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ավագանու կողմից հատկացված 180 000 /մեկ հարյուր ութսուն հազար/ դրամը օգտագործել պատճենահանող սարք ձեռք բերելու համար:
2.Կնքել «Գնման պայմանագիր» «Արմեն Եդիգարյան» ԱՁ-ի հետ պատճենահանող սարք ձեռք բերելու մասին:
3.Մշտական հանձնաժողովին՝ իրականացնել նշված աշխատանքները 2 օրվա ընթացքում և կատարման մասին զեկուցել համայնքի ղեկավարին:
4.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2019թվական հունիսի 28
Մրգաստան համայնք